

ՀԱՐԱՒԻ ՄԷՋ ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ ՓՈԽԸՄԲՈՆՈՒՄ

Պեյրուբի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանատունը յայտարարեց, թէ ամերիկեան միջնորդութեամբ Զոմի մէջ տեղի ունեցած լիբանանեան-իսրայելեան երկօրեայ բանակցութիւններուն ընթացքին համաձայնութիւն գոյացած է հարաւի բռնագրաւեալ կարգ մը շրջաններէն իսրայելեան ուժերուն փորձառական Նահանջի ընդհանուր ծրագրին շուրջ, իսկ մանրամասնութիւնները այժմ պիտի քննարկուին զինուորական մակարդակի վրայ՝ գործադրելու համար շրջանակային համաձայնութեան բոլոր յօդուածները: Աւելի ուշ հաղորդուեցաւ, որ իսրայելեան Նահանջի փորձառական շրջանին հաւանաբար մաս կազմեն հարաւային Դան-տուրիէ, Պորժ Բալաուայ, Սրիֆա, Ֆրուն, Արեւելեան եւ Արեւմտեան Չաութար գիւղերը, ուր կա՛մ տեղակայուած են իսրայելեան ուժերը, կա՛մ կը գտնուին անոնց մերձակայքին եւ կրակով կը վերահսկեն անոնց: Ըստ փորձառական շրջաններու համաձայնութեան, կ'անկկալուի, որ իսրայելեան բանակը հեռանայ խնդրոյ առարկայ գիւղերէն եւ այնտեղ տեղակայուին լիբանանեան բանակին զինուորները՝ ամրապնդելու համար պետութեան հեղինակութիւնը եւ կանխելու զինեալ կազմակերպութիւններուն աշխուժութիւնը:



Հանրապետութեան Նախագահ Ժոզէֆ Աուն շեշտեց, որ աշխատանքը կը շարունակուի դադրեցնելու պատերազմը եւ ապահովելու իսրայելեան ուժերուն Նահանջը լիբանանեան հողերէն, ինչպէս նաեւ լիբանանեան բանակին տեղակայումը հարաւի ամբողջ տարածքին: Պաալատայի պալատին մէջ ընդունած պատուիրակութիւններուն հետ զրոյցին ընթացքին Աուն Նշեց, որ ամերիկացիները սկսած են լսել լիբանանեան պահանջները, աւելցնելով որ Պեյրուբ բանակցային նիստերուն ընթացքին պիտի չհրաժարի լիբանանեան իրաւունքներէն: «Իսրայելին հետ ամերիկեան հովանաւորութեամբ կնքուած շրջանակային համաձայնագիրը արդէն սկսած է տալ իր արդիւնքը», ըսաւ հանրապետութեան Նախագահը:

ՓԱԹԻԷ ՊԵՋԱՐԵԱՆ՝ ՀԱՐԱՒԻ ԶԵՐԹԱԿԱՆ ՉՈՐՇ

Լիբանանի հարաւային շրջանին մէջ տիրող անկայուն եւ անորոշ իրավիճակին հերթական զոհերէն մէկն է լիբանանահայ Փաթրիք Անդրանիկ Պեջարեանը: Նախագահա-



կան պալատին մէջ ծառայող Հանրապետական պահակագունդի անդամ զինուորին ճակատագիրը շուրջ երեք ամիսէ կը մնար անորոշ, մինչեւ որ Կարմիր խաչի միջազգային կազմակերպութիւնը Նախանցեալ օր ընտանիքին պաշտօնապէս տեղեկացուց, որ Փաթրիքը մահացած է: Ըստ տարածուած տեղեկութիւններուն, անոր հետ հաղորդակցութեան կապը անջատուած էր 18 Ապրիլին՝ Մարժայունի շրջանին մէջ, երբ Չաիլէ ծնած հայորդին ուղղուած էր հարաւ՝ ծանօթի մը այցելելու Նպատակով: Այդ օրէն սկսեալ որեւէ ստոյգ տուեալ չկար անոր մասին, թէ՛ն հայրն ու մայրը ունեցան շարք մը հանրային ելոյթներ, կոչ ուղղելով աշխատանք տանելու՝ պարզելու իրենց զակկին ճակատագիրը: Իսկ երէկ Երեւոյեան ԵՈՒՆԻՖԷՆ յայտարարեց, որ իսրայելեան ուժերը Ռաս Նաբուրայի անցակէտին վրայ Լիբանանին յանձնած են Պեջարեանի աճիւնները, այդուհանդերձ մինչեւ ուշ գիշեր չպարզուեցան անոր անհետացումին եւ մահուան վերաբերող մանրամասնութիւնները:

ԱՅՍՕՐ՝ TRIPP-Ի ՎԱՒԵՐԱՑՈՒՄ

Կը սպասուի, որ Հայաստանի կառավարութիւնը իր այսօրուայ նիստին ընթացքին վաւերացնէ 4 Յունիսին Միացեալ Նահանգներու հետ ստորագրուած «Թրամփի ուղի» յանուն միջազգային խաղաղութեան եւ բարգաւաճումի» (TRIPP) Նախագիծին վերաբերող ռազմավարական համագործակցութեան մասին շրջանակային համաձայնագիրը: Կառավարութեան որոշումին մէջ Նշուած է, թէ միջազգային պայմանագրին մէջ ներառուած պարտաւորութիւններուն Հայաստանի Սահմանադրութեան համապատասխանութիւնը հաստատելու համար պիտի դիմուի



Սահմանադրական դատարան, որմէ դրական պատասխան ստանալու պարագային թղթածրարը պիտի փոխանցուի Ազգային ժողովին՝ վերջնական քննարկումի եւ վաւերացումի համար: Նշենք, որ Միացեալ Նահանգներու Արտաքին գործերու Նախարարութեան Նոր ձեռնարկատիրական հիմնադրամի Նախագահ Նշանակուեցաւ Կոնստանդին Սոքոլովը, որուն պիտի վստահուի TRIPP Նախագիծին համար յատկացուած աւելի քան երկու հարիւր միլիոն տոլարի ծախսերուն վերահսկումը:

ԳԵՐԻՆԵՐՈՒ ՀԱՐՑԻ ԶԵՏԱՊՆՂՈՒՄ

14 Յուլիսին Եւրոպական խորհրդարանին մէջ տեղի ունեցաւ «Հայ քաղաքական բանտարկեալները Ատրպէյճանի մէջ ու Եւրոմիութեան ներգրաւուածութեան հրամայականը» խորագրեալ քննարկում, որուն մասնակցեցան Եւրոպական խորհրդարանի անդամներ, իրաւաբաններ, մարդկային իրաւունքներու պաշտպաններ եւ Ատրպէյճանի մէջ պահուող գերիներու հարազատներ: Բանախօսները արծարծեցին այս թղթածրարին մարդասիրական, իրաւական եւ քաղաքական երեսները, ահագանգելով որ գերիներուն արգելափակումը կը խախտէ միջազգային բոլոր կարգերը, վտանգելով հայ-ատրպէյճանական կայուն խաղաղութեան յանգելու հեռանկարները: Երեսփոխան

ՀԱՐՈՒԱԾՆԵՐՈՒ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

Ծոցի շրջանին մէջ տակաւին չէ հանդարտած ապահովական վիճակը: Անցնող օրերուն շարունակուեցան թե՛ Իրանի դեմ ամերիկեան հարուածները, թե՛ յեղափոխական պահակագունդին հրթիռարձակումները տարածաշրջանին մէջ տեղակայուած ամերիկեան ուժերուն դիրքերուն դէմ: Իրանի բանակը յայտարարեց, թէ 7 զինուոր մահացած է երեկ արեւածագին ամերիկեան հրթիռային յարձակումներուն հետեւանքով, մինչ Առողջապահութեան Նախարարութիւնը յայտարարեց 30 քաղաքացիի մահը: Ամերիկեան զինուած ուժերուն կեդրոնական հրամանատարութիւնը իր կարգին շեշտեց, որ գործողութիւնները թիրախաւորած են



յեղափոխական պահակագունդին զինամթերանցները եւ հրթիռային կայանքները: Իրանի հակադարձեց ամերիկեան հարուածներուն, հրթիռներ եւ ակօղաչու սարքեր արձակելով Յորդանանի, Զուեյթի եւ Պահեյի մէջ գտնուող ամերիկեան ուժերուն վրայ եւ յայտարարեց օդանւերու եւ անօդաչու սարքերու կործանումին մասին:

ՄԱԿ-ի մէջ Իրանի մնայուն դեսպանը ահագանգեց, թէ ամերիկացիները առնուազն 42 անգամ խախտած են զինադադարի մասին յուշագրին կարգերը:

ՀԱՄԱՑԱՆՑԻ 5G+ ԿԱՊ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Այս ամառ Հայաստան այցելող զբօսաշրջիկները հնարաւորութիւն պիտի ունենան վայելելու համացանցային կապի ամենէն զարգացած՝ 5G+ ցանցը: Հաղորդակցութեանց Viva ընկերութիւնը յայտարարեց, թէ այս գերարագ համացանցանցային կապը սկսած է գործել մայրաքաղաքին եւ վեց մարզերու՝ Շիրակի, Լոռիի, Տաւուշի, Գեղարքունիքի, Կոտայքի եւ Արագածոտնի քաղաքներուն մէջ: Ընկերութիւնը պիտի շարունակէ ցանցը ընդլայնել, որպէսզի մինչեւ տարեվերջ նետառէ այլ մարզերու քաղաքները եւս՝ հասնելով մինչեւ գիւղական շրջաններուն: Ըստ ընկերութեան, բաղդատած 5G-ին հետ, ամենէն զարգացած 5G+ կապը ոչ միայն զգալիօրէն աւելի արագ է, այլ կու տայ մէկ ցանցի աւելի շատ սարքեր միացնելու հնարաւորութիւն:



Գոսթաս Մաւրիտեր կատարեց քննարկումին բացումը ու վերստին պահանջեց հայ գերիներուն անյապաղ ազատ արձակումը, աւելցնելով որ հակառակ պարագային հնարաւոր է վերատեսութեան ենթարկել Թուրքիոյ հետ Եւրոմիութեան ուժանիւթային համաձայնութիւնները:

ՍԿԻՏԱՐԻ ՍՈՐԲ ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՑ ՎԵՐԱՆՈՐԴՈՒՄ

Իսթանպուլի Սկիւտար թաղամասին մէջ վերաբացուեցաւ հայկական Սուրբ Կարապետ եկեղեցին՝ երկարատեւ վերանորոգութենէ ետք: Օծման արարողութիւնը կատարեց



Պոլտոյ հայոց Սահակ եպս. Մաշալեան պատրիարքը, ներկայութեամբ Արամ արք. Վթէշեանի եւ Սուրբ Կարապետ եկեղեցւոյ հիմնադրամի Նախագահ Ռաֆֆի Գրգորեանի, Տնօրէններու խորհուրդի անդամներուն, հոգեւոր դասին եւ հաւատացեալներու:

ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒ ԹԻՒՒՆ ՀԱՐՑՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐԱԿԱՆ ԱՐԴԻՒՆՔԸ

Յանցագործութեան եւ արդարադատութեան քաղաքականութեան հետազօտութիւններու հիմնարկը (Institute for Crime and Justice Policy Research) հրապարակեց աշխարհի երկիրներուն աղիւսակը՝ ըստ բանտարկեալներու թիւին: Հայաստան կը գրաւէ 167-րդ դիրքը եւ այս ոլորտին մէջ տարածաշրջանի լաւագոյն երկիրն է, ուր հարիւր հազար բնակիչի հաշուով կայ 83 բանտարկեալ:



50-րդ դիրքի վրայ Ատրպէյճանն է, ուր հարիւր հազար բնակիչի հաշուով կայ 264 բանտարկեալ, ապա՝ Կրասսանը՝ 285 բանտարկեալ, մինչ Ռուսիա 35-րդ է եւ հարիւր հազար հոգիի մէջ ունի 300 բանտարկեալ: Տարածաշրջանի վատագոյն դիրքը կը գրաւէ Թուրքիան, ուր հարիւր հազար բնակիչի հաշուով կայ արգելափակուած 468 մարդ: Համաշխարհային աւումով, վատագոյնը Սալվատորն է, ուր հարիւր հազար բնակիչի հաշուով կայ 1659 բանտարկեալ: Նշենք, որ Հայաստանի մէջ վերջերս հիմնուեցաւ անկախ Նոր հասարակական Նախաձեռնութիւն մը՝ քաղաքական դրդապատճառներով հետապնդող մարդոց իրաւունքները պաշտպանելու Նպատակով:

ԱՌԱՋԻՆ ԱՂԱՂԱԿԸ

Օսմանեան Կայսրութեան մայրաքաղաքին մէջ, Նախապէս չխուած եւ անսպասելի խլրտում մը կը պատահէր 15 Յուլիս 1890-ին: Կարմիր Սուլթանին քիթին տակ, հայկական յեղափոխութիւնը իր առաջին ձեռնոցը կը նետէր բռնակալութեան ժանտ լուծին դէմ: Ժողովրդային պոռթկում մը կու գար արդարօրէն ընդվզելու այն անիրաւութեանց դէմ՝ որոնք կը պատահէին օսմանեան տարածքներէն ներս, այնքա՛ն բնականօրէն եւ այնքա՛ն սովորական դարձած խժոժութիւններով: Օսմաններու որջին մէջ այս առաջին աղաղակն էր որ կը լսուէր, հետագային ծաւալելու, Նոր թափ ստանալու եւ ահագնանալու կանխատեսութեամբ: Բռնապետութեան հիմքերը հետզհետէ պիտի խարխւէին՝ արդէն որպէս պատմական եւ անխուսափելի օրինաչափութիւն: Այդ Նախաքայլը, պատմական ճակատագրի բերումով, իր ուսերուն կը կրէր Յնչական կուսակցութիւնը: Առաջին աղաղակը Նաեւ առաջին ահագանգն էր ազգային արթնութեան, ընկերային պայքարի գիտակցութեան եւ համա-օսմանեան սթափութեան:

Ի հարկէ, խօսքը կը վերաբերի Գում Գաբուի ցոյցին: Յնչական կուսակցութեան այս իւրայատուկ ցատումը, Կ. Պոլսոյ միաւորին Նախաձեռնութեամբ, ղեկավարեցին Մեծն Մուրատ (Յամբարձում Պօյաճեան) եւ Յարութիւն Ճանկիւլեան (Կայծիկ): Ի հարկէ, բախումը անխուսափելի էր օսմանեան ոստիկանութեան հետ: Հոն ինկան հնչական առաջին Նահատակները (Մանուկ Նալպաստեան եւ Յովհաննէս Ղումբունեան), իրենց անունները առ յաւետ քանդակելով հայ ազատագրական պայքարի պանծալի պատմութեան էջերուն:



Գում Գաբուի գործողութիւնը ընթացաւ երկու ուղղութեամբ. մին՝ պատրիարքը (հորէն արք. Աշըգեան) Գում Գաբուի պատրիարքական Նստավայրէն բռնի ուժով առաջնորդել Սուլթանին մօտ եւ ներկայացնել հայոց պահանջները, պարզել գաւառներուն մէջ տիրող անհանդուրժելի կացութիւնն ու անսանձահարելի հարստահարութիւնները եւ բողոքել համատարած անարդարութեան դէմ: Միւսը՝ ընդհատելով Մայր Եկեղեցւոյ մէջ մատուցուող Սուրբ եւ Անմահ Պատարագը՝ հանրութեան առջեւ ընթերցել հայոց պահանջները:

Կեդրոնանալով ընթերցուած պահանջագիրին ընդմէջէն բարձրացած հարցերուն վրայ, անմիջապէս կարելի է նկատել թէ ցուցարարներ միայն ազգային մտահոգութենէ չէ որ կ'առաջնորդուին, այլեւ ընկերային արդարութեան եւ դասակարգային հաւասարութեան խնդիրներն ալ կը յուզէին Նշեալ խօսքին մէջ: Փաստօրէն, ընկերային-քաղաքական յոյժ կարեւոր փաստաթուղթ մըն էր այս՝ օսմանեան հանրութեան առաջին անգամ ներկայացուող: Ռեւէ ձախալողման, յառաջդիմասէր կամ լուսամիտ անձ, ինչ ազգութեան եւ կրօնի ալ պատկանէր, վստահաբար պիտի կիսէր այս առաջադրուած պահանջներուն բովանդակութիւնն ու

ԱՒԵՏԻՍ ՈԱԶՄԻԿ (Նիկոսիա)

միտքերը: Ահա ի՞նչ է հնչականներուն քաղաքական-գաղափարական ներդրումը Օսմանեան Կայսրութեան պատմութեան մէջ: Մանաւանդ այդ խաւարամիտ եւ յետադէմ օրերուն՝ Սուլթան Ապտիւլ Համիտ Բ.-ի խստաբարոյ մականկին տակ:

Պատկերը դիպուկ է երբ կը գրուի՝ *«Ի՞նչ ես դուն այսօր քու հայրենիքիդ մէջ... անասուն մը: Կաթնատու կովը, ապուշ ոչխարն անգամ քեզմէ աւելի գնահատուած են: Ի՞նչ ես դուն այսօր այս շրայլ մայրաքաղաքին մէջ: Ողորմելի պանդուխտ մը, անտուն, անտիրական աշխատաւոր մը, որ երկու ձեռքերէդ ուրիշ բան մը չունիս քեզ սեփական: Բայց այդ երկու ձեռքերդ ալ մեծերն ու հարուստները անգուր կերպով կ'աշխատցնեն, կը քամեն քու մարմնիդ բոլոր ոյժը, եւ այնուհետեւ, որուն հոգ, որ տկար ու անգործ մնացած, աղքատութեան սեւ օրերդ քարշ կու տաս մահիդ համար ա՛խ քաշելով»:*

Պահանջագիրին գաղափարա-ընկերային եուրթիւնը կը յստականայ երբ կը կարդանք հողի մասին, անոր բարիքներուն եւ սեփականութեան շուրջ, զայն բաշխելու մօտեցումին մասին. իսկական ընկերվարութեան հիմնասիւններէն է այս թեզը, որ կ'արժարժծի հնչականներու կողմէ. -

«Դուն կ'ուզես որ հողը հաւասարապէս պատկանելի ըլլայ այն ամենուն, որը կ'մշակեն զայն:

Դուն կ'ուզես, որ այդ հողէն առած արդիւնքն ալ պատկանի անոնց, որը կ'արտաբերեն զայն:

Դուն կ'ուզես որ այդ սկզբունքին համեմատ ամէն մարդ աշխատանք, գործ ընէ եւ հողը մշակէ, բանի, որուն զօրութեամբ ալ՝ ամէն մարդ աշխատաւոր պիտի ըլլայ իր ապրուստն հայթայթելու համար:

Դուն կ'ուզես, մի խօսքով, որ տնտեսական ամէն հարստութիւն միշտ հաւասարապէս սահմանուած ըլլայ ժողովուրդին ամէն անդամներուն միջեւ:

Ինչպէս գիտենք պատմութենէն, հողն ու անոր ընդերքին հարստութիւնը միշտ ալ եղած են վիճարկումի նիւթեր՝ երբ վաշխառուներ ուզած են խլել բոլորին պատկանող այդ վիթխարի հարստութիւնը, մինչ մշակներ, գիւղացիներ, հողին կառչած աշխատաւորներ ընդդիմացած են այս բացայայտ աւագակութեան, անյագուրդ ալան-թալանին: Հողին տիրութիւնը սուր բախումներու մղած է ներհակընդդէմ դասակարգերը: Պահանջագիրը ժողովուրդին արդար քրտինքին հետն է անտարակոյս:

Ժողովրդավարութեան առումով, յառաջամիտ եւ առողջ մօտեցումը ակնյայտ է պահանջագիրին մէջ՝ *«Քաղաքակաւնապէս դուն ինքդ պիտի ըլլաս քո ինքնավար տէրը: Պիտի ըլլայ Օրէնսդիր ժողով մը, իբրեւ ժողովրդային ներկայացուցչութիւն, որոնց անդամները կ'ընտրուին ազատ կերպով, ընդհանուր քուէարկութեամբ, առանց խտրութեան կրօնի, դասակարգի, սեռի, պարագմունքի եւ կարողութեան»:* Եւ այս կէտերը իրապարակաւ կը յայտարարուին եւ առաջ կը քաշուին 1890-ին՝ երբ աշխարհի մեծ մասը անծանօթ էր նման միտքերու, ժողովրդանպաստ թեզերու, համահաւասարութեան գաղափարներու: Եւ այն ալ Սուլթանի լրտեսներու ցանցին մէջ՝ լի հալածանքներով, վտանգներով եւ դժնի կանոններով: Եւ պահանջագիրը կ'եզրակացուի՝ *«Կեցցէ՛ հայ ժողովուրդը, որոյ միակ աղաղակն այժմ պէտք է ըլլայ՝ ՄԱՀ ԿԱՍ ԱՀԱՏՈՒԹԻՒՆ»:*

Հայրենասիրութեան եւ գաղափարանկրկութեան տիպար այդ սերունդը իր բոսոր արեամբ ճանապարհ հորդեց դէպի ազգային եւ ընկերային գիտակցութիւն, ընկերային խաւերու հաւասարութիւն եւ համընդհանուր արդարութիւն: Չօրաշարժեց ճնշեալները ե՛ւ ազգային ե՛ւ դասակարգային առումներով: Իրօք, պահանջագիրին բովանդակութիւնը ուսումնասիրելի բազում կէտեր ունի տակաւին:

Գում Գաբուի առաջին աղաղակէն ետք սկսած էր ահալի պայքարի երկարաշունչ պատմութիւնը...

ԳՐԻՇ ՂԱԹԵԱՆ

ստեղծագործութիւնն է: Ալիսիա Կիրակոսեանը հեղինակային անհատականութեամբ պատկանում է արժանթիւնեան, ամերիկեան եւ հայկական եռամշակոյթներին:

Քսաներորդ դարի եօթանասունական թուականներից սպանական աշխարհամարած ծաւալում արդէն հանրա-յայտ ճանաչում Նուաճած, Նա Ներխուժեց հայոց բանաստեղծութեան գեղաշխարհը, Հայաստանից՝ Սփիւռք, հայաստանցի չլինելով հանդերձ... հիմնականում, հայրենի բանաստեղծ Կահագն Դաւթեանի վարպետ թարգմանութեամբ: Մի շարք ակնառու տուեսլներով Ալիսիա Կիրակոսեանը ընթացիկ հայ գրականութեան մէջ վաստակել է իր արժանաւոր ու անգիջելի բարձը: Նրա սպաներէն բանաստեղծութիւնների մի գրքի շապիկը նկարագրողէ մ աշխարհահռչակ գեղանկարիչ եւ քանդակագործ Փայօս Փիքասօն:

Ա. Կիրակոսեանը բանաստեղծական խոհաշխարհով ըմբռնում է կեանքը տիեզերական զանգուածողութեամբ, ուր խորանում է իր մարդկային սահմանափակ փորձա-նշդների պարոյկով, հարցախուզութեամբ, բողոքներով, խոստովանութիւններով, աղօթների ու աղերսանքների մրմունջներով, վախերի ու ցաւերի կտտանքներով, երագների ու բարձանքների մաղանքներով, յարատեւ ամրացող հավաքողով... միաժամանակ, քննարկումների ու վերլուծութիւնների մարգարտաշնորհով: Բանաստեղծական մենախօսութեան մի խոհամարտ, կեանքի ընդմիջից միւնչեւ աստուածային ամենաբովանդակութիւնը. Նուաճելու ստեղծագործողի հասունութիւն, շահելու ընթերցողին, որպէս հեղինակային հուսկ նպատակ: Նա իր բանաստեղծութեան մտածողութեամբ աւելի արագ է սուրում, քան ժամանակը, որ քարշ է գալիս հետքից, ոտքերին կառչած: Նրա

Շարունակութիւնը տեսնել էջ 4

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԷՆ ԴԷՊԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ. ՀԱՆՐԱՅԻՆ ԽՕՍՈՅԹԻ ՆՈՐ ՈՒՂԻՆԵՐ

ՎԱՐՈՒԺ ԹԵՆՊԷԼԵԱՆ

Կար ժամանակ, երբ հանրային կարծիք ձեւաւորելու եւ տեղեկութիւն փոխանցելու իրաւունքը գրեթէ բացառապէս կը պատկանէր աւանդական մամուլին: Թերթերը, պարբերականները, ռատիոկայանները եւ պատկերասփիւռները ոչ միայն տեղեկութիւն կը փոխանցէին, այլեւ կ'որոշէին, թէ ո՞ր տեղեկութիւնը արժանի է հանրութեան հասնելու: Անոնք էին հանրային խօսոյթի դարպասապահերը, եւ ոեւէ մէկը, որ կ'ուզէր լսելի դառնալ, ստիպուած էր անցնիլ այդ դարպասներուն մէջէն:

Ապա եկաւ համացանցը: Յետո՞յ՝ անհատական հարթակները: Առաջին անգամ ըլլալով, անհատ մը կրնար գրել, իրապարակել, մեկնաբանել եւ ընթերցողներ գտնել՝ առանց խմբագրական մեծ կառոյցի, տպարանային ծախսերու կամ լրատուական հաստատութեան մը հովանաւորութեան: Շատ երբ այս փոփոխութիւնը ընկալեցին որպէս տեղեկատուութեան ժողովրդավարացում: Ուրիշներ՝ որպէս մասնագիտական լրագրութեան հեղինակութեան անկում: Անկախ գնահատականներէն, մէկ բան անժխտելի է. անհատական հարթակները փոխեցին հանրային խօսոյթին բնոյթը:



Սակայն աւելի քան երկու տասնամեակ ետք, հետաքրքրական երեւոյթ մը կը շարունակէ գոյութիւն ունենալ: Շատ մը հաստատութիւններ, մշակութային կազմակերպութիւններ, համայնքային կառոյցներ եւ երբեմն նոյնիսկ պետական մարմիններ տակաւին ամբողջովին չեն հաշտուած այս փոփոխութեան հետ: Անոնք կը շարունակեն գործել այն ենթադրութեամբ, թէ «իսկական» լրատումի-շօքը միայն այն է, որ խմբագրատուն ունի, տպագիր թերթ կամ պատկերասփիւռի կամ ռատիոյի ալիք:

Առաջին հայեցքով այս երեւոյթը կրնայ պարզ վարչական կամ կազմակերպչական հարց մը թուիլ: Սակայն իրականութեան մէջ անկեալ աւելի խոր հակամարտութեան մը արտայայտութիւնն է: Խնդիրը անհատական հարթակներուն կամ մամուլին մասին չէ միայն: Խնդիրը հեղինակութեան մասին է: Տասնամեակներ շարունակ տեղեկատուութեան հեղինակութիւնը կը թիւեր հաստատութենէ: Ընթերցողը կը վստահէր ոչ միայն յօդուածին, այլ Նաեւ այն կազմակերպութեան, որ զայն կը իրատարակէր: Այսօր, սակայն, թուային աշխարհը փոխած է այդ տրամաբանութիւնը: Շատ մը պարագաներու հեղինակութիւնը կը կառուցուի ոչ թէ հաստատութեան անունով, այլ՝ հեղինակին եւ ընթերցողին միջեւ ստեղծուած վստահութեամբ: Ահա թէ ինչու անհատական հարթակներու եւ աւանդական մամուլի միջեւ գոյացած լարուածութիւնը իրականութեան մէջ օրինականութեան եւ ազդեցութեան շուրջ ընթացող լուռ պայքար մըն է:

Մէկ կողմէ՝ աւանդական լրատումիջոյցները, որոնք սկզբունքով կը հիմնուին խմբագրական փորձառութեան եւ մասնագիտական պատասխանատուութեան վրայ: Միւս կողմէ՝ անկախ հարթակները, որոնք կը հիմնուին անմիջականութեան, անձնական ձայնի եւ ընթերցողի հետ ուղղակի կապի վրայ:

Այս հակադրութիւնը կը դրսեւորուի Նաեւ ընթերցողներու



Նախասիրութիւններուն մէջ: Աւանդական մամուլի ընթերցողը կը փնտռէ ամուր վերլուծութիւն, մասնագիտական մօտեցում եւ հաստատուած աղբիւրներ, թեւեւ յաճախ կը հանդիպինք ստորագիր յօդուածներու, որոնք հիմնուած մէկ կամ երկու աղբիւրի վրայ, երբեմն միայն մէկ, բայց այնպէս կը ներկայացուին, որ յօդուածը ստորագրողը ինք բերած է բոլոր տեղեկութիւնները եւ ոչ թէ օգտուած աղբիւրներէ՝ առանց նշելու զանոնք: Թուային աշխարհի ընթերցողը, ընդհակառակը, աւելի շատ կը գնահատէ անկեղծութիւնը, անմիջականութիւնը եւ անհատական տեսակետը: Ան

Շարունակութիւնը տեսնել էջ 3

ԱԼԻՍԻԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Սպանահունչ այն հռչակուած բանաստեղծուիին է, որ գրաւած լինելով իսպանախօս ժողովուրդների սիրտը, եւ արժանացած լինելով բազմաթիւ մրցանակների ու մեծարանքների, Նախ թարգմանաբար, ապա արդէն հեղինակաբար հնչում է հայադոջանջ: Նրա բանաստեղծութիւնները սպաներէն, ապա անգլերէն, Նաեւ ստեղծագործուեցին հայերէնով: Դա մեծ տեղաշարժ էր հեղինակի ու հայ ընթերցողի փոխյարաբերութեան մէջ, ըստ որում դա սկսեց տեղի ունենալ թարգմանչի չմիջնորդութեամբ, այլ ուղղակի, հեղինակային հայերէնով, որպէս ստեղծագործութիւն: Թէ տուեալ ստեղծագործու-



թիւնը իր Նախնական մտապատկերային եւ բառամտա-ծողութեան վիճակում ի՞նչ լեզուով է իր սաղմնային գոյառոյթը ստացել, հետաքրքրական չէ. դրա բացայայտումը այլեւս կը լինի փսփսուքային մանրուք: Բուն խնդիրը՝

ՄԵԾԱՐԵՆՑ ԵՒ ՊՐԷՏՊԸՐԻ ԵՐԿՈՒ ՀՈԳԵՂԲԱՅՐ

Քնարական արձակ: Չաւատա՛, սիրելի ընթերցող, գարմանալ պէտք չէ, այդպիսի արձակ, իրապէս կայ: Փորձեցէ կարողալ Ռէյ Պրետպըրիի «Ապրիլի կախարդը» պատմուածքը եւ կը համոզուիք:


Ասիկա այն պատմուածքներէն է, որուն ընթերցումը աւարտելէ ետք ակամայ երկա՛ր լռութիւն կը պահպանես...

Յեղիսակը իր պատմուածքին մէջ հնարքի մը դիմած է, որ երեւութապէս կը թուի շատ պարզ, բայց գրեթէ կախարդական է: Ան իր վառ երեակայութիւնը կը գործածէ մարդկային զգացողութիւնները տեսանելի դարձնելու համար: Պատմուածքին կեդրոնը կախարդանքը չէ, այլ՝ ապրելու, սիրելու եւ թէկուզ մէկ գարնանային գիշեր մարդ ըլլալու կարօտը:

Պրետպըրիի արձակը յաճախ իւրօրինակ բանաստեղծութիւն է՝ քօղարկուած պատմուածքի պատմութեամբ: Ան չի ծանրաբեռներ նախադասութիւնները, բայց անոնց կշռոյթը, պատկերները, օդը... Կը թուի թէ ամէն ինչ թեթեւ է, թրթռուն ու եթերային, եւ կարողալ յետոյ միայն կը հասկնաս, թէ ներսդ կարելոր բան մը կը փոխուի:

Քնարական արձակը, որ հագուադէպ է գրականութեան մէջ, սովորաբար ոչ թէ պատում է, այլ՝ տրամադրութիւն: «Ապրիլի կախարդը» նուրբ պատմուածքին մէջ գարնանային հոգի, ծառերը, լուսինը, մարդոց ծայները, այս բոլորը կը վերածուին կերպարներու՝ գործող անձերու:

Յետաքրքրական փաստ է, որ քնարականութիւնը բնաւ չէ վախճուցած Պրետպըրիին: Մինչդեռ ժամանակակից շատ հեղինակներ կան, որոնք կը խուսափին բացայայտ քնշումէն, հաւանաբար խորհելով, որ կ'արժանանան ընթերցողի հեզնանքին:



Իսկ Պրետպըրի այնպէս կը գրէ, կարծես կը հաւատայ (իրապէ՛ս կը հաւատայ), որ գեղեցկութիւնը կրնայ փրկել երեկոյ մը, յիշողութիւն մը, նոյնիսկ կէսեք մը...:

Շատեր Պրետպըրիի պէտք է յիշեն իր «Fahrenheit 451»-ով կամ «The Martian Chronicles»-ով, բայց ինծի կը թուի, թէ անոր մեծութիւնը պէտք է փնտռել իր կարճ պատմուածքներուն մէջ: Դոն քնդամէնը մէկ քանի էջերու մէջ ան այնպիսի զգացողութիւն կը փոխանցէ, որ շատ վէպեր չեն յաջողի իրենց հարիւրաւոր էջերով:

Անոր «Խատուտիկի գինին», որ այնքան հարազատօրէն բեմականացուց ու բեմադրեց տաղանդաշատ Նարինէ Գրիգորեան, սոսկ վէպ չէ, այլ՝ յիշողութեան երաժշտութիւն: Այն գիրքերն է, որոնց էջերը կը կարողաս, մտածելով թէ ոչ մէկ առանձնայատուկ բան տեղի կ'ունենայ ինչ, բայց աւարտելէ ետք կը հասկնաս, որ ամբողջական ամառ մը ապրած Պրետպըրի չի փորձեր «մեծ գաղափարներ» պարտադրել իր ընթերցողին: Ան կը գրէ խատուտիկի հոտի, տաք մայթի, գիշերային շոգեկառքի տուրքի, նոր կօշիկներուն առթած երջանկութեան մասին, եւ յանկարծ կը հասկնաս, որ կէսանքը այդ մանրութիւնն են: Ան կարողութիւնը ունի ընթացիկ պահերը վերածելու առասպել-տօսի:

Ռէյ Պրետպըրի կարողալ ու սիրել չի նշանակեր գայն ընտրել Տանթի, Սերվանթեսի կամ Տոպէսեւքիի փոխարէն: Մեծերը տարբեր լեզուներով կը խօսին մարդու հոգիին մասին:

Տանթ մեզի կը հասցնէ մինչեւ մարդու բարոյական տիեզերքը: Սերվանթես կը յուշէ, որ իտալապաշտութիւնը թերեւս երբեմն ծիծաղելի թուի, բայց աշխարհը առանց ատոր պարզապէս կ'աղքատանայ: Տոպէսեւքի կ'իջնէ մարդու գիտակցութեան խորունկ խորխորատները, իսկ Պրետպըրի կը յիշեցնէ այն, ինչ յաճախ կը մոռնանք՝ աշխարհը հրաշալի է այն պատճառով, որ կայ՝ գոյութիւն ունի:

Լաւ գրականութիւնը, ըստ իս, չի ճանչնար ժանր, որ երբեմն կրնայ վէպ ըլլալ, երբեմն՝ դիւցազնավէպ, պատմուածք, երեակայական կամ նոյնիսկ մանկական պատում: Հարցը ոչ թէ ձեռք մէջ է, այլ այն, թէ արդեօք գիրքը կը փոխէ ընթերցողը: Կան գիրքեր, որոնք կը կարդանք եւ յաջորդ շաբաթս իսկ հազիւ կը յիշենք անոր մանրամասները: Կան նաեւ գիրքեր, որոնք մեզի հետ կը մնան ամբողջ կեանքի ընթացքին, իրենց ներգործութիւնը տարածելով մեր մտածելակերպին, մեր լեզուին վրայ:

Ըստ իս, մեծ գրականութիւնը պէտք է թափանցէ ընթերցողի հոգիին ներս ու վերափոխէ գայն: Ընթերցանութիւնը, ի վերջոյ, հոգիի շնչառութիւն է:

Շատ լաւ ցուցանիշ է «վերընթերցելու» ցանկութիւնը: Այդ կը նշանակէ, թէ հեղինակը ինքզինք չէ սպառած առաջին ընթերցումով... Բան մը կայ, որ կը դիմադրէ, քիչ-քիչ կը բացուի, կամ յուզական արձագանք կ'առաջացնէ, եւ այդ բոլորը չեն տեղաւորուիր մէկ ընթերցումի մէջ:

Ռէյ Պրետպըրի այն հեղինակներէն է, որուն գրականութեան կարելի է «վերադառնալ» ոչ թէ պատումի, այլ զգացողութեան համար: Անոր ստեղծած մթնոլորտը տեսակ մը ներքին մեղեդի է: Եւ այդ է պատճառը, որ ամէն տարիքի կարելի է վերադառնալ իր պատմուածքներուն, վստահ ըլլալով, որ ամէն անգամ նոր շերտ մը ի յայտ կը բերես...

Իրականութեան մէջ, «Ապրիլի կախարդը» պատմուածքին եւ «Խատուտիկի գինի» վէպին կախարդանքը կարելիութիւն է ըլլալ այն, ինչ որ... չես կրնար ըլլալ: Եւ ճիշդ ինչ է Պրետպըրիին նուրբ ցաւը՝ երեակայութեան ազատութիւնը, որ միշտ կը բախի իրականութեան սահմանին:

Դիմա կ'ուզեմ յայտնել բան մը, որ գլուխ ցցած է ներաշխարհի մէջ, եւ չբաժնեկցիլ ընթերցողիս հետ, պարզապէս չեմ կրնար:

ԱՆԻ ԹՈՐԱՆԵԱՆ (ԵՐԵԱՄ)

Զգարմանաք, եթէ համարձակմբ բաղդատել Պրետպըրիի արձակը եւ Մեծարենցի քերթողութիւնը...

Անոնք, ճիշդ է, «կը խօսին» տարբեր լեզուներով, տարբեր ոճերով, տարբեր աշխարհներէ, տարբեր ժամանակներու ընդմէջէն, բայց կու գան նոյն «զգայական տարածութենէն»... ոչ թէ գաղափարներու, այլ՝ մթնոլորտի, լոյսի, օդի, անցողիկ գեղեցկութեան լեզուով:

«Ապրիլի կախարդը»-ին թովչանքը այն է, որ իրականութիւնը պահ մը կը դառնայ թեթեւ ու անիրական: Ամէն ինչ՝ գարունը, շարժումը, նոյնիսկ ցանկութիւնը, կը թուի թէ կրնային այլ ըլլալ: Բայց այդ կարելիութեան մէջ նաեւ մեղմ ցաւ մը կայ... գեղեցիկը միշտ ալ քիչ մը... անհասանելի է:

Նոյն զգացողութիւնն է երբ Մեծարենց կը կարդաս, յատկապէս այն նուրբ բնապատկերները, ուր բնութիւնը ոչ թէ կը նկարագրուի, այլ... կը շնչուի: Անոր պատկերներուն մէջ ալ տեսակ մը «կէս-երազ» վիճակ կայ, երբ իրականը կը վերածուի երաժշտութեան:

Եթէ փորձենք շատ կարճ ձեւակերպել այս կապը, Պրետպըրիին կը գրէ այն մասին, թէ իրականութիւնը ինչպէս կը դառնայ երազ, մինչ Մեծարենց կը գրէ այն մասին, թէ երազը ինչպէս կ'ապրի իրականութեան մէջ:

Երկուքին մօտ ալ կոպիտ սահմանը բացակայ է: Կայ անցումային տարածք՝ «գարնանային» վիճակ, ուր մարդը մասամբ դուրս է ժամանակէն:

«Լուսնի լոյսը ծառերէն ծաղիկի պէս էր կախուէր...»:

Սա ոչ թէ նկարագրութիւն, այլ վիճակ է... Սա է մեծարենցեան հիմնական ուժը. անոր բնութիւնը չի «ներկայացուիր», այլ կը դառնայ ներքին զգացողութեան շարունակութիւն: Լոյսը, ծառը, հովը, կարծես բոլորը կը կորսնցնեն իրենց նիւթականութիւնը եւ կը դառնան զգացմունք:

Ասիկա պատկերային այն մտածողութիւնն է, որ կը շարկապէ իրարմէ այնքան տարբեր երկու տաղանդաւոր հեղինակները: Երկուքին լուսինը կամ գարունը պարզապէս ետնապատկեր չեն, այլ ընթերցողին վրայ կ'ազդեն եւ տրամադրութիւն կը վերածեն կերպարի:

Ինծի համար Մեծարենց եւ Պրետպըրի հոգեղբայրներ են: Անոնք երկու տարբեր աշխարհներ են, բայց երկուքի աշխարհներու հիմքին մէջ նոյն բանը կը տեսնենք՝ ժամանակի եւ գեղեցկութեան զգայնութիւնը:

Մեծարենցի բանաստեղծութեան մէջ աշխարհը միշտ «շնչող ներկայ» է... բնութիւնը կ'ապրի հիմա, բայց այդ «հիմա»-ին մէջ արդէն կայ անցողիկութիւնը: Անոր լոյսը ոչ թէ չէզոք, այլ թախծոտ է, որովհետեւ գիտակցուած է՝ կ'անցնի...

Նոյնն է Պրետպըրի: Անոր գարունները եւ ամառները միշտ «լարման գերագոյն կէտի պահեր» են. ներկայ, որ կը սկսի ցաւցնել, քանի որ... անցողիկ է:

Երկուքին «գեղեցկութիւնները» այնքան իրական են, որ այդ իրականութեամբ ալ կը դառնան անցողիկութեան յիշեցում:

Մեծարենց՝ խտացուած, երաժշտական, ներսդին պայթող պատկերներով:

Պրետպըրի՝ պատմողական, ֆիլմարուեստին յատուկ, բայց քերթողական կշռոյթով:

Երկուքն ալ աշխարհը կ'ապրին որպէս զգացմունքային լոյս: Երկուքն ալ գիտեն, որ գեղեցկութիւնը անցողիկ է:

Երկուքն ալ իրականութեան նիւթը կը վերածեն զգացողութեան:

Վերյիշենք Մեծարենցի «Աքսսիաներու շուքին տակ» չքնաղ քերթումը:

*Ծաղիկներէն յուշիկ թերթեր կը թափէ
Բուրումներով օծուն հովիկն իրիկուան,
Հոգիներուն կ'իջնէ երազ մը բուրեան,
Ի՜նչ հեշտին է մըթնշաղկ այս սատափէ:*

*Աքսսիաներ, գինով լոյսէ ու տապէ,
Օրորուելով մաքուր շունջ մը կը հեւան.
Մինչ կը ձիւնէ ծաղիկն իրենց հոտեան՝
Չոր խօլաբար հովը գրկել կը շտապէ:*

Դոս աշխարհի բոլոր զգայարանները կը խանուին իրար: Գոյնը հոտ կը դառնայ, հոտը՝ շարժում, շարժումը՝ երաժշտութիւն: Գրականագիտութեան մէջ սա կը կոչուի synesthesia (զգայարաններու փոխներթափանցում), բայց այդ եզրը կարելի է աղքատ սեպել այն կախարդանքին դիմաց, որ ստեղծած է Մեծարենց:

Որքա՛ն յուզական են այս տողերը՝
«Մինչ կը ձիւնէ ծաղիկն իրենց հոտեան՝
Չոր խօլաբար հովը գրկել կը շտապէ»:

Բայց նոյնն է Պրետպըրիի աշխարհը: Դոն ծաղիկները ձիւնի պէս կը թափին, իսկ հովը կը շտապէ գանոնք գրկել: Դովը հոն ոչ թէ օդի շարժում, այլ կերպար է, սիրող է, չ'ուզեր ուշանալ:

Այսպիսի մարդակերպ բնութիւն ունի Պրետպըրի: Անոր ծառերը, ամառները, լուսինները, հովերը սոսկական բնապատկերներ չեն, այլ մարդոց հետ կ'ապրին նոյն զգացմունքային տիեզերքին մէջ:

Կայ սակայն նրբին տարբերութիւն մը: Մեծարենցեան երաժշտականութիւնը, որքան ալ լուսաւոր, կարծես կը գիտակցի, որ գեղեցկութիւնը փխրուն է: Անոր բառերուն մէջ երջանկութիւնը թախիծի ստուեր ունի:

Պրետպըրի, յատկապէս երիտասարդութեան մասին գրած իր պատումներուն մէջ, վերջին վայրկեանին կարծես ըսել կ'ուզէ՝ «Այո՛, ամէն ինչ կ'անցնի, բայց մինչ այդ, տեսէք, թէ որքան հրաշալի է»:

Մեծարենց կը լսէ ծաղկի թերթին ինչալու ձայնը: Պրետպըրի՝ թերթին թռիչքը:

Երկուքն ալ կը նային նոյն թերթին: Գուցէ անոնց հոգեղբայրութիւնը ոչ այնքան պատկերներու մէջ է, որքան աշխարհի նկատմամբ ունեցած երախտագիտութեան:

«Չոգեղբայր» բառը շատ գեղեցիկ հասկացութիւն է, որ մեզ կ'ազատէ ազդեցութիւններու, աղբիւրներու, ժամանակագրութեան կապանքներէն եւ կ'արտօնէ խօսիլ այն մասին, որ աշխարհի տարբեր կողմերուն, տարբեր լեզուներով, երկու արուեստագետ նոյն լոյսը կրնան տեսնել...

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԷՆ ԴԷՊԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ...

Շարունակուած էջ 2-էն

յաճախ ոչ թէ կազմակերպութեան հեղինակութեան կը հետեւի, այլ՝ հեղինակին:

Սակայն այս տարբերութիւնը պէտք չէ հասկնալ որպէս պարզ սերունդներու բախում: Ասիկա աւելի խոր է. երկու տարբեր աշխարհընկալումներու խաչաձեւումն է: Մեկը կը հաւատայ վերէն վար նուիրապետական հեղինակութեան, միւսը՝ ցանցային եւ հորիզոնական հաղորդակցութեան: Դետաքրքրականը այն է, որ երկու կողմերն ալ ունին իրենց ուժեղ եւ տկար կողմերը:

Անհատական հարթակները կրնան երբեմն տառապիլ ենթակայականութենէ կամ զգացական մօտեցումներէ: Իսկ աւանդական մամուլը յաճախ կը մեղադրուի դանդաղ արձագանգելու, չափազանց ձեւական ըլլալու կամ հանրութեան կենդանի զարկերակէն հեռանալու ընթացքով: Աւելին, կան լրատուամիջոցներ, որոնց քաղաքական կամ ֆինանսական հովանաւորութիւնները երբեմն ստուեր կը նետեն անոնց խմբագրական անկախութեան վրայ, ընթերցողին մօտ ստեղծելով այն տպաւորութիւնը, թէ որոշ թեմաներ կը լուսաբանուին ոչ թէ մեկնելով հանրային հետաքրքրութենէ կամ ճշմարտութենէ, այլ քաղաքական օրակարգերէ եւ կը ծառայեն որպէս քարոզչական մեքենայ կամ ուղեղալուացի գործիք:

Դարցը այն է, թէ արդեօք մենք պատրա՞ստ ենք ընդունելու, որ հանրային խօսոյթի կառուցուածքը փոխուած է: Այսօր մարդիկ ոչ միայն թերթեր եւ պատկերասփիւռն տեղեկութիւն կը ստանան, այլ նաեւ անհատական հարթակներէ, փոքրասթներէ, YouTube-ի հաղորդումներէ եւ ընկերային ցանցերու մասնագիտացած էջերէ: Շատ անգամ փոքր, բայց նուիրուած լսարան ունեցող անկախ հարթակ մը կրնայ աւելի մեծ ազդեցութիւն ունենալ, քան մեծ անցեալ ունեցող, բայց ժամանակի ընթացքին ինքզինք սահմանափակած լրատուամիջոց մը:

Այս չի նշանակեր, որ աւանդական մամուլը կորսնցուցած է իր դերը: Բայց նոյնքան սխալ է թուային տոր ծայները երկրորդական կամ աննշան նկատելը: Որովհետեւ հանրային խօսոյթը այլեւս չի կառավարուիր միայն խմբագրատուներէն: Իշխանութիւնը աստիճանաբար կը տեղափոխուի դէպի այն հարթակները, ուր կը գտնուին ընթերցողները: Իսկ ընթերցողները ամէնուր են այսօր:

Դաւանաբար այսօր անհատական հարթակներու եւ աւանդական մամուլի միջեւ ընթացող լուռ լարուածութիւնը իրականութեան մէջ բախում մը չէ բնաւ: Ան անցում մըն է դէպի այն աշխարհը, ուր գաղափարներու արժէքը այլեւս միայն անոնց հրապարակման վայրով չի չափուիր, այլ՝ մարդոց հասնելու, վստահութիւն ներշնչելու եւ գանոնք մտածելու մղելու անոնց կարողութեամբ:

«Տարբերակ 21»

ԲԱՆՈՆԱԶԱՐՈՒՇԻ ՄԱՐԻԱՆՆԱ ԳԵՈՐԳԵԱՆ ICMA-Ի ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀԱՍԱԾ Է

Քանոնահարուի Մարիաննա Գեորգեան հեղինակաւոր ICMA-ի (InterContinental Music Awards) «Լաւագոյն երաժշտ» անուանակարգի եզրափակիչ հասած է:

Ի դէպ, մասնակից երկիրներուն թիւը անցած է 100-ը, իսկ մասնակիցներուն թիւը՝ 3500-ը: Մարիաննա Գեորգեանը եզրափակիչ փուլ հասած միակ մասնակիցն է, որ կը ներկայացնէ Դայաստանի Դանրապետութիւնը, հայկական դրօշը, Եան ազգանունը, հայկական արուեստը եւ ազգային նուագարան քանոնը:



Ան 2025-ին արժանացած է համաշխարհային խորհրդաւիշ վիրտուոզ երաժիշտի (Global Icon Awards) տիտղոսին, 2020-ին ստացած է համաշխարհային World Folk Vision մրցոյթի գլխաւոր մրցանակը եւ բազմաթիւ միջազգային մրցումներու առաջին կարգի դափնեկիր է:

Մարիաննա Գեորգեանը Կոմիտասի անուն կամերային երաժշտութեան ազգային կեդրոնի «Տաղարան» հնագոյն երաժշտութեան համոյթի մենակատար քանոնահարուիին է (գեղարուեստական ղեկավար՝ Ս. Երկանեան):

ԱԼԻՍԻԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Շարունակում էք 2-էն

բանաստեղծական մտորումը թեւեր ունի, թաջում է: Իմաստային ու առնչական իմաստով նա գերտարածական բանաստեղծութեան է հասել բազմազոյ եութիւնների ներսեփականումով: Նախ զգում, մտապատկերում է. ապա բառակերտում է, որպէս ստեղծագործութիւն, որպէս երկ ու բանաստեղծութիւն, որպէս կեանքի ալիսիական արտացոլում մանրահամատիեգերական երկարութեամբ, լայնութեամբ ու խորութեամբ, բովանդակութեամբ... Նա բազմաեակ անհատականութիւն ունի... Ներհայեցողութեամբ արդէն դառնում է երկու եակ. մէկը՝ որ նայում, գնում է իր ներաշխարհը, որպէս մի գոյ եակ... միւսը, որ ներաշխարհին է, որպէս մի առանձին գոյ եակ: Այդ երկու եակների մասին մտորելը, զգալը, նա կատարում է տակաւին մի երրորդ, անկախ եակի միջոցով, որի հետ հարցազոյցի, կամ քննախուզութեան է մտնում եւս մի այլ գոյ եութեան միջոցով: Այդպիսով է նա մէկ կեանքին պարգեւում բազմակի գոյութիւն: Ի հարկէ, կարծեցեալ: Այդ բազմակի գոյութիւնների փոխյարաբերութիւններով նա հասնում է գերտարածականութեան: Այդպիսով է ծնւում նրա գերտարածական բանաստեղծութիւնը, ինքնալրումի փուլեր բոլորելով: Նրա ստեղծագործութիւնների գեղարուեստական, մտապատկերային համակարգը իրայատուկ է: Գերտարածական համեմատութիւններով ու բնորոշումներով կարելի է նրան հոգեհարազատ համարել Նարեկացու հետ, ընթացիկ արդիականութեամբ: Որպէս ստեղծագործող նախ ընկալում է իր տեսածը աշխարհը, կուտակում է իր մէջ, ապա ներհայեցողութեամբ արտացոլում է բանաստեղծութեամբ, որ հաւատացած է՝ կեանքի նկարկենն է, կենդանագիրը: Այլեւ խորքով ու իմաստային գերտարածութեամբ է ընկալում բառը, դրա կարեւորութիւնը հաղորդակցուելու ընդկեանքի, կեանքի ու գերկեանքի հետ: Տարածութիւնների ենթակայական բաշխումներ: Հաւատում է հոգու անմահութեանը, վերմարդեղութեանը՝ Շամիրամից մինչեւ Գլեուփաթա...մինչեւ Ալիսիա Կիրակոսեան:

Նա հմայում է մայրութեան աշխարհով. նրա մայրերգութիւնը պարզ ձօն չէ մայրութեան, այլ նաեւ մօր կողմից՝ վասն զաւակի սիրոյ ու նուիրումութեան, զաւակի մայրստեղծութեան հրաշքի փառեղբութիւն է, իւրովի մտապատկերած, երեւոյթի ընկալման գիտլած նորութեամբ:

Իւրովասն սփիւռահայի անհատականութեամբ է վերաբերում մեր ազգային ու հայրենական սրբութիւններին, որոնց հետ հարազատ է ու մերձ դարերի վաղմիութեամբ. օրհներգում է արդի ու ընթացիկ վերահանդիպումը, նախկին, վաղնջական հարազատի շերմութեամբ, գերտարածական վերմարդեղութեամբ:

Իւրաքանչիւր խորագրի տակ նրա բանաստեղծութիւնները յաճախ չեն հասնում մի գերագոյն աւարտի, այլ մի տեսակ մերում են անվերջանալիոյեան, անսահմանոյեան հետ, աստղունքով ընդմիջուած, որ երգում է նիւթի գերտարածումն են բնորոշում: Նրա բանաստեղծութիւնը յագեցած է մի խորհրդաւոր ներշնչումով, եւ դիպչում է ընթերցողի այնպիսի զգացումներին, որ համարում են սրտի գաղտնարանում պահուած ներանձնական ծաւալ:

Նա ժամանակին ըստ արժանւոյն ներկայացուել է ընդունուել է, որպէս Նոպլեան մրցանակի թեկնածու: Եթէ պատահի, որ արդարութիւնը եւ ճշմարտութիւնը համընկնեն այս տարի, ուրեմն պէտք է հաւատալ Նոպլեան տուչութեան արդար ու ճշմարիտ յատկութեանը, ու մերժել որեւէ քաղաքադիւնազօտական նկատառումների ներգործութիւն, որ հայոց դէպքում չգոյ է:

Նոս Անճելեսում, կեանքի 78-րդ տարում, մահացաւ բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոսեանը. նա ծնուել էր 1936 Յուլիսի 13-ին, Արժանթինի Զորտոպա քաղաքում: Ալիսիա Կիրակոսեանը գրել է սպաներէն, իտալերէն, յետոյ նաեւ՝ հայերէն եւ անգլերէն: Նա ծնուել է վանեցի Գուրգէն Կիրակոսեանի ընտանիքում: Սովորել է Պուենոս Այրեսի Ազգային համալսարանի իրաւաբանական բաժանմունքում, 10 տարի խաղացել է արժանթինեան թատրոնում, որպէս դերասանուհի: ԱՄՆ-ում բնակւում էր 1971-ից: ԱՄՆ-ի սպանախօս գրողների միութեան պատուաւոր նախագահն էր: Կիրակոսեանի բանաստեղծութեան թեմատիկ առանցքն են կազմում սերը, մայրութիւնը, հայրենիքը եւ փիլիսոփայական խոհը:

Սպաներէն եւ իտալերէն ժողովածուներն են՝ «Մէկ օր, հինգ ձայն» 1966 թ, «Էութիւն եւ կետադրութիւն» 1967 թ, «Փետրո Ամօր» 1969 թ, «Ժամանակի, սիրոյ, խաղաղութեան մէջ» 1970 թ, «Հայաստանեան ապրումներ» 1970 թ, «Երկունքի ոլորտ» 1972 թ, «Հակաշխարհի» 1972 թ, «Մոխիրներից յետոյ» եւ «Նամակ առ Հայաստան» 1972 թ, «Մայրութեան քերթուածներ» 1989 թ:

Նրա «Փետրո Ամօր» կտորը ներկայացուել է Պուենոս Այրեսի «Փայրօ» թատրոնում: Հայերէն լոյս են տեսել նրա «Արմատ եւ Էութիւն» 1967 թ, «Նամակ առ Հայաստան» 1979 թ, «Խորան I» 1992 թ, «Խորան II» 1992 թ, «Ամբողջական երկեր» 2005 թ. «Հարցազոյց Աստծու հետ», «Սիրոյ մէկուկէս հազարամեակ» գրքերը: Եռալեզու իրատարակուել է «Բանաստեղծութիւն եւ գերտարածութիւն» 1994 թ, «Խաղաղութիւն քուստային» 2005 թ, անգլերէն՝ «Սէր եւ մայրութիւն բառերից այն կողմ» 1992 թ, «Ստորում բառից այն կողմ» 1992 թ, «Արմատ բառից այն կողմ» 1992 թ, «Բեն՝ երկնքի համար» 1992 թ գրքերը:

Կիրակոսեանը գերտարածական կոչուող բանաստեղծական շարժման հիմնադիրն է. տեսութիւնը հրապարակել է սպաներէն, հայերէն եւ անգլերէն 1992 թ: Նրա բանաստեղծութիւնը բնորոշում է անհատի ներաշխարհի պատկերներով, արդիական լեզուամտածողութեամբ, բանաստեղծական վերախմբատարումների ինքնատիպութեամբ: Իր վերջին շրջանի գործերում անդրադարձել է դարավերջի հայաստանեան պատմական իրադարձութիւններին: Սպաներէնի է թարգմանել Բաֆֆու «Խենթը»: Բազմիցս այցելել է Հայաստան:

Պարգեւատրուել է Խաչատուր Աբովեանի անուն մրցանակով: ՀՀ ԳԱԱ պատուաւոր դոկտոր է ընտրուել 2007 թ: Դուստրը՝ Լարան ծնւած 1973 թ, անգլիագիր բանաստեղծուհի է:



ԹԵՆԻՍ

ՍԻՆՆԵՐ ԿԸ ՊԱՀՊԱՆԵ ՏԻՏՂՈՍԸ

Լոնտոնի Կեդրոնական դաշտին վրայ, Աշխարհի թիւ 1 դասուած թենիսիստ Եանիք Սիններ յաջողեցաւ պաշտպանել Ուիմպլտընի իր տիտղոսը՝ աւարտական մրցումին յաղթահարելով Ալեքսանտր Չվերեւին: Իտալացին, առաջին սեթը թայ-պրեյով պարտուելէ ետք, վերադարձաւ եւ յաղթեց 6-7(7), 7-6(2), 6-3, 6-4 հաշիւներով՝ շուրջ 3 ժամ 46 վայրկեան տեւած մրցումին աւարտին: Այս յաղթանակով Սիններ երկրորդ անգամ անընդմեջ բարձրացուց Ուիմպլտընի բաժակը՝ ամրապնդելով իր առաջին դիրքը աշխարհի լաւագոյն թենիսիստներուն շարքին:



Ըմբշամարտ

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԵՐՐՈՊԱՅԻ «Մ-20» ԱԶԱՏ ՈՃԻ ԼԱԽԱԳՈՅՆ ԵՐՐՈՐԴԻՆ ՄԵՋ

Սքոփիէի մէջ տեղի ունեցած «Մ-20» Եւրոպայի Ազատ Ոճի ըմբշամարտի ախոյանութիւնը աւարտեցաւ 12 Յուլիսին: Հայաստանի հաւաքականը խմբային դասաւորման մէջ գրաւեց երրորդ դիրքը՝ հաւաքելով 118 միաւոր:



Հայ ըմբիշները մրցաշարքին ընթացքին նուաճեցին վեց մետալ՝ երկու արծաթ եւ չորս պրոնզ:

Արծաթէ մետալակիրներ

Արէն Հայրապետեան - 65 քկ
Ռազմիկ Եփրեմեան - 86 քկ

Պրոնզէ մետալակիրներ

Սաշա Պետրոսեան - 57 քկ
Գագիկ Ղազարեան - 61 քկ
Նարեկ Նիկողոսեան - 79 քկ
Հենրիկ Այբեան - 125 քկ

Ֆութպոլ

«ԱՐԱՐԱՏ-ԱՐՄԵՆԻԱ»-Ն ՀԱՍԱԻ ԶԵՄՓԻԸՆԶ ԼԻԿԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

Հայաստանի ախոյան «Արարատ-Արմենիա»-ն յաջողեցաւ անցնիլ 2026/27 մրցաշրջանի ՈւԵՖԱ Զեմփիլըզ Լիկի որակաւորման երկրորդ փուլ:



Հայկական կազմը պատասխան հանդիպումին պարտուեցաւ լաթվիական «Դիկա» խումբին դէմ՝ 3-2 հաշիւով, սակայն առաջին հանդիպումը 2-0 յաղթանակով աւարտելէ ետք, երկու խաղերու ընդհանուր հաշիւով յաղթանակ ապահովեց՝ 4-3 արդիւնքով եւ շարունակեց իր պայքարը մրցաշարքին մէջ, ուր յաջորդ փուլին պիտի մրցի իրաւստական «Շամրոց Ռովըրզ» խումբին դէմ:

Պատրաստեց՝ ՍՈՒՐՍ Ս.



ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀՐԱԻԷՐ

Ուրբաթ 17 Յուլիս 2026, երեկոյեան ժամը 8:00-ին, Հ.Մ.Մ. Պէյրութի ակումբին մէջ տեղի պիտի ունենայ Հ.Մ.Մ Պէյրութի տարեկան ընդհանուր անդամական ժողովը:

Անդամներէն կը պահանջուի ժողովին ներկայանալ իրենց անդամական տոմսերով:

Հ.Մ.Մ. Պէյրութի Վարչութիւն

**ՎԱՐՈՎԱՐՈՒ
ԶՐԱՅԻՆ
ՓԱՌԱՏՈՆ**

Տօններ • Խաղանք • Վայելներ

**ԿԻՐԱԿԻ
ՅՈՒՆԻՍ 26**

2026

10:00-Էն սկսեալ

Մար Միայել
Նոր Հաճոյն փողոց
Հովանաւոր

almaz

Տոնով ֆուտպոլ
Հաճով ուտելիքներ
Ջութով խաղեր
Ժամանցային խաղեր
Տիկնկ երաժշտութիւն
Կրպակներ եւ աւելին
Մուտք անվճար է
Ժամը 10:00-Էն սկսեալ
Մանրամասնութեան համար 76 587 256

Այս դժուար պահերուն, մեր Դարմանատունը կը շարունակէ կարիքաւորին կողքին կանգնիլ: Այսօր մենք ձեր աջակցութեան պէտք ունինք՝ մեր առաքելութիւնը շարունակելու համար:

Կրնաք նուիրատուութիւն կատարել Wish հաշիւով եւ օգնել մեզի որպէսզի շարունակենք խնամք եւ անհրաժեշտ ծառայութիւնները մատուցելու մեր գաղութին:

Իւրաքանչիւր ներդրում, ինքեան ալ փոքր ըլլայ, նպատակն կը ծառայէ:

Միասին կրնանք յոյսը վառ պահել:

Wish MONEY 71/356035

Շնորհակալութիւն Ձեր ազ նուիրեան եւ օժանդակութեան համար:
Միասին անելի զօրաւոր ենք:

Կը տեղեկացնենք իր Հոգեբան Գոհար Պալեքճեան ձեզ և ընդունի ամէն Երեքշաբթի ժամադրութեամբ:

We inform you that the Psychologist **Kohar Balekdjian** will be available every **Tuesday** by appointment.

نود اعلامكم بأن أخصائي نفسي كوهار باليجيان يستقبلكم كل يوم الثلاثاء بموعد مسبق.

CONTACT US

Պէյրութ, Նոր Հաճոյն, Ս. Գեղեղ Եկեղեցի
بيروت، شارع نور هاجين، كنيسة مار جرجس للزمن الأوثونذكس
01/560704 - 71/356035

ARARAD DAILY NEWSPAPER

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمنية
تصدر عن شركة ماسيس للمباعة والنشر (ش.م.م.)